ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես գիտենք, հայերենում յ բաղաձայնն ավելի թույլ արգելքով է արտասանվում և ավելի շատ է ձայն պարունակում, քան մյուս բաղաձայնները: Մյուսներից տարբերելու համար յ հնչյունը կոչում են **կիսաձայն**:

Կիսաձայն յ հնչյունի և որևէ ձայնավորի կապակցությունը կոչվում է երկհնչյուն:

Օրինակ՝ մայր, լույս, մատյան, ալյուր բառերի մեջ այ, ույ, յա կապակցությունները երկհնչյուններ են:

Հայերենն ունի հետևյալ երկհնչյունները՝ այ–հայր, քարայր, յա–Ա-րաքսյա, շաբաթօրյակ, եյ (արտասանվում է էյ)–թեյ, Զեյթուն, ե (արտասանվում է յե)–երազ, եղնիկ, Միքայել, յի–ամառային, գայի, ոյ (արտասանվում է օյ)–Նոյ, գոյ, յո–յոթանասուն, արդյոք, ույ–գույն, լույս, յու–արյուն, մյուս:

Հայերենի երկհնչյունների արտասանությունն ու գրությունը մեծ մասամբ համապատասխանում են, օրինակ՝ կղզյակ, Հրաչյա, հայր, թեյ, բույր, վայրկյան:

Յ ՁԱՅՆԱԿԱՊ

Հայերենում իրար հաջորդող երկու ձայնավորների միջև սովորաբար գրում կամ արտասանվում է յ կիսաձայնը, ինչպես՝ կայարան, Գայանե, էակ:

Երկու ձայնավորների միջև գրվող կամ արտասանվող յ կիսաձայնը կոչվում է ձայնակապ:

Ձայնակապը երկհնչյուն է կազմում ոչ թե նախորդ, այլ հաջորդ ձայնավորի հետ: Այսպես՝ հարավային բառում ձայնակապը ա և ի ձայնավորների միջև է: Երկհնչյունը ոչ թե այ հնչյունակապակցությունն է, այլ՝ յի հնչյունակապակցությունը: Տողադարձելիս կամ վանկատելիս երկհնչյունի կիսաձայնը և ձայնավորը ընկնում են նույն վանկում, օրինակ՝ հա–յե–լի: